

4. Ընտրությունների արդյունքներ

4.1

Շահառուների խորհրդում ընտրված են համարվում առավելագույն քվեներ ստացած 15 թեկնածուները:

4.2

Առավելագույն ձայներ հավաքած ՇԽ հինգ թեկնածուները ընտրվում են որպես Կառավարման խորհրդի անդամներ:

Կառավարման խորհուրդ պատվիրակված ներկայացուցիչները շարունակում են մնալ Շահառուների խորհրդում՝ որպես անդամներ:

4.3

Հավասար քվեներ հավաքած թեկնածուների առաջնահերթությունը որոշվում է տեղում՝ Ընտրական հանձնաժողովի կազմակերպած վիճակահանությամբ:

4.4

Կառավարման խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի (ների) լիազորությունները դադարելու դեպքում, Կառավարման խորհրդում նրա (նր) թափուր տեղը լրացնելու նպատակով թափուր տեղը լրացվում է առավելագույն ձայներ հավաքած հաջորդիվ անդամով (անդամներով):